

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլխարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայնը որկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ
Редакция на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն որոշուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անբող-
ջովիս կամ մասամբ:
Իրանուցման տղը 20 սանթիմ. երե-
ֆէն աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ՀԱԿԱՀՐԵՈՒԹԻՒՆ

Կարծես որքան ազատական
գաղափարներ, մարդասիրական ըս-
կըղբունքներ կը տարածուին և
արմատ կը ձգեն եւրոպական ժո-
ղովուրդներու մէջ, այնքան աւել-
ի հակահրէական բրթականտան
կը ծաւալի: Իրողութիւնը հակա-
սական կերեւի, և այս պատճա-
ռով իսկ լուրջ քննութեան մը ար-
ժանի է:

Հրէաներն ալ մարդ չեն, մարդ-
կային ընկերութեան մէկ մասը
չեն կազմեր որ դուրս կը մնան
ազատախոս մարդասիրութեան մը
ազդեցութեան լայն շրջանակէն և
նոյն իսկ անկրօն աշխարհաքաղա-
քացիներու ատելութեան առար-
կայ կը դառնան: Այս ինչ տե-
սակ ազատամտութիւն է Եւրոպա-
ցիներուն, որ երբ կարգը հրէա-
ններուն կուգայ՝ առիթի մը կը
սպասեն որ կրօնական ու ցեղա-
յին խնդրին ազդեցութենէն հա-
մակ բռնուած, դիւահարի մը
ուժգնութեամբ ամէն կողմէ պո-
ռան «Անկցին Հրէայք», զար-
նեն, զարնուին, վաճառատուններ
քանդեն և տուններու վրայ յար-
ձակին՝ հակառակ ստիկանութեան
ուժին և անոր ամէն նախազգու-
շական միջոցներուն:

Որքան հրէաներ ու հրէասէր-
ներ մտածելի և հրապարակային
գումարումներու մէջ ամենախիստ
բացատրութիւններով այսպէսեցին,
դատապարտեցին հակահրէական
շարժումները իբր արգասիք կրօ-
նական խտրութեան մը, որ ա-
մօթ ու նախատինք է այս դարու
լուսաւորութեան: Ուրիշներ ալ
չէթէ կրօնական ալ ցեղային
խտրութեան իբր հետեւանք յայ-
տարարեցին հակահրէութիւնը:
Այս երկու կարծիքները վերջերս
արձագանք գտան նաեւ Յունաս-
թի երեսփոխանական ժողովին այն
ազմկայոյզ նիստերէն մէկուն մէջ,
ուր Տրայֆուս-Լաթէրհայիի դատը
վիճաբանութեանց առարկայ ե-
ղաւ:

Երկու կարծիքներն ալ անհիմն
կերեւան մեզ: Խնդիրը ոչ կրօնա-
կան է, ոչ ալ ցեղային պարզա-

պէս: Կրօնական չէ, որովհետեւ
պարզ ակնարկ մը նետելով մա-
մուլի այն յարձակումներուն վրայ
որոնց առարկան հրէաներն են,
իսկոյն կը համոզուինք թէ մով-
սիսական կրօնը, իր վարդապե-
տութիւնները, իր ծէսերը, իր
նուիրապետութիւնը չեն ինքնին
արտայայտուած ատելութեան ա-
ռարկան:

Եւ շարժումին գլուխը կեցող
անձերը կամ գոնէ անոնց մեծա-
մասնութիւնը եւրոպական ամէն
երկրներու մէջ այն դասակարգի
մարդիկ են, որոնք համար կրօնքը
նշանակութիւն չունի: Արդէն ի-
րօք անցած է այն ժամանակը,
ուր եւրոպական ժողովուրդները,
կամ աւելի ճիշդ, անոնց խլրտող
մասը կրնար ոգեւորուիլ զուտ կը-
րօնական գաղափարներով և կռուի
ասպարէզը նետուիլ:

Եւրոպայի մէջ գրեթէ ամէն
տեղ կաթոլիկ և բողոքական սի-
րով ու խաղաղութեամբ չեն կե-
նակցիր արդէն իրարու հետ:

Միեւնոյն առարկութիւնները
կրնանք ընել անոնց դէմ, որ ցե-
ղային տարբերութեան կը վերադ-
րին՝ մեզ զբաղեցնող ընկերային
երեւոյթը: Ո՛չ, հրէան չհալա-
ծուիր իբր անգամ մասնաւոր ցե-
ղի մը, չատուիր միմիայն և պար-
զապէս իբր սերունդ Սեմի, այն-
պէս որ ամէն հրէայ անխտիր,
անպայման ենթակայ ըլլար հա-
լածանքի: Ընդհակառակը՝ Եւրո-
պայի մէջ բազմաթիւ են այն հը-
րէաները որոնք ընդհանուր հա-
մակրութիւն և յարգանք կը վա-
յելին:

Ճշմարտութիւնը սա է որ պատ-
մական դէպքերու բերմամբ, ու-
րոնց համար հրէաները իրենք
պատասխանատու չեն, դրամ չա-
հելու տենչը իր ամէն վատ հե-
տեւանքներով կը տիրէ իրենց մէջ
աւելի քան ուրիշ ժողովուրդներու
մէջ, որոնց ոչ մէկը, պէտք է խոս-
տովանիլ, բողոքովին ազատ է այդ
ախտէն, որովհետեւ արդէն մեր
ժամանակին վրայ դրոշմուած է
չահասիրութեան կնիքը: Գոնէ
մենք, Հայերս, ասոր շատ լաւ
համոզուեցանք վերջին տարիներ:

Իր բնավարէն մարդկայէս
տարագրուած, աշխարհի ամէն
կողմը ցրուած, ամէն տեղ և դա-
րերով հալածուած, հայրենիք
ու ազգային աղատութիւն վերս-
տին ձեռք ձգելէ բռնկովին յուսա-
բեկ՝ Հրէան դրամ և դրամի մի-
ջոցով ազդեցութիւն չահելու մէջ
կեդրոնացուց իր կեանքի մտա-
տիպարը: Գծծութիւն, խարդա-
խութիւն, անխղճութիւն և կեղ-
ծիք որոնք հրէաներուն մէջ ի-
րենց զարգացման ծայրագոյն աս-
տիճանը հասած են, հրէական մտա-
տիպարին հետեւանքներն էին:
Այդ միջոցներով պիտի հասնէին
իրենց միակ նպատակին: Միւս
կողմէ բնականաբար առեւտրական
ճարպիկութիւնը իրենց մէկ յատ-
կանիչը դարձաւ, նոյնպէս և խը-
նայողութիւնը և վարկէքներէ զըր-
կումը՝ իրենց ոչ բարեկեցիկ դա-
սին համար:

Զարմանալի է որ այս պայ-
մաններու մէջ հրէաները յաջողե-
ցան ելեւմտական աշխարհի թա-
գաւորներն ըլլալ դարաւոր ջան-
քերէ հոքը, այնպէս որ, օրինա-
կի համար, Բարիկի Ռոչիլտնե-
րուն հարստութիւնը, ինպէս կը
հաւաստեն, ամբողջ Ֆրանսայի
հարստութեան 1/100ը կը ներկա-
յացնէ այսօր:

Քրիստոնեան անոնց դրամական
այս բարձր դիրքին ալ անտար-
բեր աչքով պիտի նայէր, եթէ
իրեն վայրոյթը չգրգռէին այն
անբարոյական և անբարոյականա-
ցուցիչ միջոցները, որոնք հրէու-
թեան նկարագրին մէյմէկ յատ-
կութիւնները և անոր շահու աղ-
բիւրը եղած են:

Հոս պէտք է փնտռել հակա-
հրէութեան իսկական պատճառ-
ները, ինչպէս նաեւ այն վատ ու
ֆիտասկար գործածութեան մէջ,
որուն յաճախ կը յատկանայ հրէ-
ական դրամը: Կրօն և ցեղ ինք-
նին նշանակութիւն չունին այս-
տեղ, ինչպէս Տրայֆուս-Լաթէր-
հայի-Չոլայի դատին պատճառած
ժողովրդային ցոյցերէն ալ ամէն
հետաքննին միտք կարող էր նշմա-
րել որոշապէս:

Ընթերցողին ուշադրութիւնը կը հը-
րաւորուի երրորդ երեսի խմբագրական
ազդին վրայ:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլսոյ սևուցիչներէն մին
յօդուած մը գրած է Բիզանդիոնի
մէջ ջատագովելու համար իր սա-
գաղափարը թէ Ուսում. Խոր-
հուրդը Կ. Պօլսոյ բոլոր թաղային
վարժարաններու համար միօրի-
նակ ներքին կանոնագիր մը պատ-
րաստելու է ձեռնհաս անձերու
ձեռքով: Բիզանդիոնի խմբագ-
րութիւնը այս առաջարկին առի-
թով մեր դպրոցներու մասին այն-
քան ճիշդ և օգտակար դիտողու-
թիւններ ըրած է, որ Պուլկարա-
հայ դպրոցներու գործերով դա-
ղողներու համար ալ շատ շահեկա-
նութիւն ունին: Ահա այդ դիտո-
ղութիւնները:

«Բուն փորձանքն, Հինդիւն է՞...
նոյն իսկ այն կանոնագիրներու, Եւ-
րոպայի տեղաւոր, Յայտագիրներու ցնորա-
կան շտապութիւնն է, որով ողորդու-
են մեր վարժարաններ: Ինչ կ'արժեն
այս ամէն մեծաբանութիւններ, երբ
դառն իրականութիւնը մեր աչքին
տակ է ամէն օր: Ամէն բանէ առաջ
լաւ ուսուցիչներու կը կարօտինք. ա-
պա թէ ոչ, ո՞վ պիտի գործածէ այս
բոլոր կանոնագիրներն ու Եւրոպայի-
րը: Ամէն բանէ առաջ բարոյական
կրթութեան կը կարօտինք, ապա թէ
ոչ, ինչ խել պիտի տեսնենք ցոփ,
շուայտ, անկիրթ, անկրօն սերունդէ
մը: Միթէ արդէն քիչ տուեցինք...
Ամէն բանէ առաջ կը կարօտինք գործ-
նական կրթութեան մը, ապա թէ ոչ,
դործնական կեանքի մէջ ինչ օգուտ
պիտի տեսնեն տղաք իրենց այժմեան
անուանական ուսումներէն: Ահա օրի-
նակ մը. — Մայրաքաղաքիս է՛ն լաւ ա-
նուն ունեցող նախկին վարժարաններէն
միոյն բարձրագոյն կարգի մի քանի
աղաքը կը քննենք, որոց միջին թիւն
7 կամ 7ուկէս ըլլալով, կը հետեւի թէ
միջակէն վեր (70 0/0) կարողութիւն
ունենալին ուսուցիչներուն եւ տնօրէ-
նութեան կողմէ հաստատուել է պաշ-
տօնապէս Արդ, մինչ այս տղաք Պե-
րիկէսի մեծագործութիւնները կ'պատ-
մեն, Ասպասիայի արարքներուն կը
հետաքրքրուին, եւ Արքեմիդէսի թեւը
ջուրին մէջ խոթելով ըրած զարմանա-
լի դիտը կ'բացատրեն, չկրցան ճիշդ
պատասխան մը տալ մեզ, երբ հար-
ցուցինք թէ 5 օսմ. ոսկիով քանի՞
քիւր հաց կրնանք գնել եւ Ազգ. Որ-
բանոցը զրկել, երբ հարցինք քիւր 55
բարտ է: Զկրցան նաեւ ճիշդ պատաս-
խան մը տալ երբ հարցուցինք թէ քա-

նի՞ օխա ածուխ կրնանք զրկել իսկա-
գեղի աղքատներուն՝ 10 գաղղ. ոսկի-
ով, երբ տոնախմբի 100 օխան 75 զրչ.
է։ Տաճկերէն թերթ մը տուինք եւ
ներքին լուր մը աղէկ մը չկրցան
կարդալ, թո՛ղ թէ թարգմանել, եւ
չքսին թէ ի՞նչ կը նշանակէ զիստիւն-
եաց, ի խնդրոյ եւնոյ Աւելորդ է ըսել
թէ չկրցան ճիշտ հոլովել իսկա՛նի,
խնդիր, նոյն իսկ գեթ բառը։ Եւ սա-
կայն, գրաբար մասունք բանինքը
ընցողքը էին, եւ աշխարհաբար շա-
րագրութիւններ կընէին, նկարագրե-
լով հով, ծով, գով, լոյս, յոյս, բոյս.
կոյս, իրենց սարօքը։ Գաղղ. քերա-
կանութեան կէսն աւարտեալ են, բայց
տող մը բան չկրցան մաքուր կարդալ
եւ թարգմանել։ Եթէ թիւերնին զէրօ
ըլլար, հոգ չէինք ընելու։ Բայց ինտո՞ր
ալ առեալ են 7 կամ աւելի, իբրեւ ամ-
սական միջին թիւ։ Եւ այս՝ մեր է՛ն
աղէկ (կարծուած) զպրոցներէն միոյն
մէջ։ Հիմա կը հասկնա՞ք, Հինգիւսն
էֆ, թէ որ տեղուանք ենք տակա-
ւին. եւ դուք ելե՛ր տիպար կամ ան-
տիպ անյատակ ներքին կանոնագիր կը
շատաղովէք։ Այս ընթացքով, ազգա-
յին կրթութիւն բնա՛ւ պիտի չմնայ
մեր մէջ։ Քիչ չատ կարողութեան տէր
ծնողաց ամէնուն ալ աչքն օտար դըպ-
րոցներու է, եւ զարմանալի է որ
նոյն իսկ Բերայի եւ Գատը գիւղի պէս
հարուստ թաղերու մէջ հայ—հռոմէա-
կան խառնարանք քիչ չատ կը յաջողին
մեր ազգային վարժարաններուն դէմ՝
իրենց մրցումին մէջ, եւ հետզհետէ
իրենց կը քաշեն մեր է՛ն աղէկ թոշակ
վճարելու կարող տղաքը։ Ծնողք ի-
րենց աղջիկ զաւկերնրը դպրոցէն կը
քաշեն կը հանեն, «անկրթութիւն կը
սովորին կոր, դո՛նէ ընտանեկան կըր-
թութիւննին վրայ չտան. աղջիկ զաւ-
կին դո՛նէ բարեկրթութիւն պէտք է»
ըսելով, ի՞նչ զանգատ է այս. մէյ մը
չէ, երկուք չէ։ Կարելի՞ է երեւակա-
յել այսքան տպիկարութիւն։ Բառե-
րով ժամավաճառ կըլլանք, մեք զմեզ
կը խաբենք, մինչ անդին կրթական
գործին տարրական շնորհներէն զուրկ
կը դառնան մեր տարրական դպրոց-
ներն անգամ։ Ի՛նչ տակաւին Կեդրոնա-
կան մը առեալ անցեր ենք։ Մարդիկ
Աստուծոյ, նախ սա՛ նախակրթութիւ-
նը կարգի դնենք, ա՛ն միայն շնորհ-
քով աւանդենք, եւ մնացեալն ապա-
գային թողունք։ Այս ընթացքով թո-
շակ վճարելու անկարող ձրի աշա-
կերտները միայն պիտի մնան մեր վար-
ժարաններուն մէջ, եւ այն աղքատիկ
աշակերտք յետոյ Կեդրոնական վար-
ժարանն ինչ պիտի ընեն։ Կը կրկնենք,
ամէն բանէ առաջ ուսուցիչ, վարժա-
պետ հասցնենք, ամէն բանէ առաջ
բարոյական կրթութիւն մը ձառնել
մեր տղաքներուն համար, եւ ամենէն
աւելի կարեւորութիւն եւ ստիպողու-
թիւն՝ գործնական եւ անմիջական ա-
ռարկաներուն տանք։

ԱՌՈՐԵԱՅ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Սիրելի ընթերցող,

Նիւթական այս կարի անձուկ
մեր վիճակին մէջ ո՛րքան ուրախ
պիտի ըլլայիր արդեօք եթէ գրա-
նէիր լաւագոյն միջոցը՝ որով կա-
րենայինք իրարու հաղորդել մեր
գաղափարները, մեր մտածումնե-
րը, մեր զգացումները առանց
թղթատարական ծախուց ենթար-
կուելու։ Դիտէ՛ որ «ձրիարար»
մակըայը չեմ ուզեր գործածել

նոյն իսկ այս առթիւ, գիտնալով
որ ամէն քսակ որքան ալ նիհար
ըլլայ, իր արժանապատուութիւնն
ունի, եւ քսակներու արժանապատ-
ուութիւնը անոնցմէ է որոնք շատ
չուտով... կը վիրաւորուին, միշտ
այն նիհար եւ ջղային մարդոց
պէս, որոնք աննշան առիթի մը
կըսպասեն բռնկիւլու համար։

Թղթակցելու այս միջոցը ես
գտած ըլլալու պզտիկ փառասի-
րութիւնը կուզէի ունենալ, եւ ար-
դէն կը պատրաստուէի բոլոր ու-
ժով «էվրոքս» պօռալու, երբ
յանկարծ միտքս ինկաւ որ, ան-
կուտի թղթակիցներու ծառայու-
թիւն մը մատուցանելու համար,
բարեխիշտակ Պարոնեան այդ մի-
ջոցը ցոյց տուած է ժամանակին
Մաւիսի ընթերցողաց։ Որո՞ն
միտքէն կ'անցնէր որ Պարոնեան
մեծ փառասիրութիւնները ձազկե-
լէ վերջ՝ ժամանակ ու սիրտ սնե-
ցած է պզտիկ փառասիրութիւն-
ներն ալ հաշուի առնելու, եւ շի-
տակն ըսելով, իմ՝ յուսախաբու-
թեանս մէջ չեմ կրնար հաշտ ա-
ջօք նալիլ Պարոնեանի յաջողու-
թեանց վրայ, նախանձէս կրակ
կը կտրիմ—ուրիշնե՛ր ալ կան, ու
րոնք անշուշտ կը կուրծին—երբ
կը համոզուիմ հետզհետէ սա բա-
ցարձակ ճշմարտութեան թէ շու-
կայի այս մարդը, ո՛չ միայն
մեր արդի գրականութեան սկզբը,
նաեւ պէ՛տք է մեզին մէկն է, այլ
ունեցած է նաեւ Երեմիաներու,
Եսայիներու խմորը։ Գէթ այս-
պէս մտածել կուտան ինձ իր մար-
գարէութիւնները հայկական խնդ-
րոյն նկատմամբ, որ իր ժամանակն
ալ խնդիր է եղեր տակաւին, սա
միակ բացառութեամբ որ քաղա-
քակրթութիւնն այնքան յառաջ
գացած չէր այն ատենները՝ պը-
զատնական համակերպութեամբ
մը թող տալու համար որ 300000
հայեր ջարդուին... Ի սէր քրիս-
տոնէութեան։

Ո՛հ, սիրելի ընթերցող, կը նե-
րիս, շեղեցայ նիւթէս, մի՛ մե-
ղադրեր զիս, վասն զի բնականէս
քիչ մը շատախօս եմ եւ մանա-
ւանդ բամբասող։ Լաւագոյն կը
համարիմ անօթի մնալ, խահուէին
անկիւնը սքիլ եւ դիտել սիկաուիս
մուխին շահատակութիւնները քան
զրկուած ըլլալ բամբասելու հա-
ճոյքէն։

Ուրիմ, շահագործելով Պա-
րոնեանի այս օգտակար գիւտը,
պիտի առաջարկեմ, սիրելի ըն-
թերցող, որ իրաւունքը ժա-
մադրաւայր մ'ընենք մեր տեսա-
կութեանց։ Հոն թափենք մեր
ուրախութիւններն ու վիշտերը,
հոն կտրուենք մեր խորհրդածու-
թիւններն ու հոն, մեր փոխա-
դարձ գրաւածներուն մէջ, փնտը-
ռենք մեր ընդ մեր թ պատաս-
խաններն այն հարցումներուն՝ ու-
րոնք հոգիէն կը բլլին ուղղակի
եւ որոնց պատասխանել շատ ան-
գամ անհրաժեշտ է, մխիթարուե-

լու համար օրուան մեզ ընծայած
տափակութիւններուն մէջ եւ չի
տեսնելու ու չ'զգալու համար աղ-
տոտ մասերը մեր գոյութեան պայ-
մաններուն, որոնց մէջ, աւա՛ղ,
շատերը կուզեն գտնել իրենց յա-
ջողութիւնները, եւ ուրիշներ՝ ի-
րենց արգարացումները։

Յտեսութիւն ուրիմ, սիրելի ըն-
թերցող. կը խոստանամ հարուստ
պաշարով մը ներկայանալ քեզ ա-
ռաջին առթիւ։

ԹՂԹԱՆԻՑ

ՈՒՐԱԽԱՌԻԹ ԼՈՒՐ ՄԸ

Բագուէն գրուած մասնաւորնա-
մակ մը արձագանք կուտայ թիֆ-
լիսի մէջ շրջող լուրի մը, որուն
համեմատ ռուսահայ դպրոցներուն
խնդիրը պիտի կարգադրուի մօտ
ժամանակի մէջ եւ այս է եղեր
վիճ. կաթողիկոսին թիֆլիս գա-
լուն բուն շարժառիթը։ Իր ճամ-
բորդութեան հարկաւոր արտօնու-
թեան կառավարութենէն տրուելը,
թիֆլիսի մէջ պաշտօնական բարձ-
րագոյն շրջանակներէ իրեն հղած
յարգալիր ընդունելութիւնը ար-
դէն իբր նշան կը նկատուէին կա-
ռավարութեան բարեացակամու-
թեան հայ ժողովուրդին նկատ-
մամբ։ Կըսուի թէ կովկասի կա-
ռավարչապետը, որ Բէթէրսպուրկ
պիտի երթայ, յուսադիր է կա-
թողիկոսը դպրոցական խնդրի
մասին, որուն կարգադրութեան
համար խոստացեր է իր կողմէ
ջանք չխնայել։

Ուրիշ զրոյցի մը համեմատ
Ռուսիա որոշած է եղեր ասկէ
ետքը մեծագոյն ինամք նուիրել
Թիքահայերուն անդորրութեան՝
այս մասին ազդեցիկ լեզու մը
գործածելով Դրան հանդէպ եւ
պահանջելով խստապէս որ բոլոր
նորագումները գործադրուին։

Վերապահութեամբ կուտանք
այս լուրերը, որոց ստուգութիւնը
ճշդելու միջոցներ կը պակսին
մեզ։

Իրաւ, եւրոպական քաղաքա-
կանութեան տեսակէտով կրնայ
հաւանական ենթադրուիլ որ Ռու-
սիա ուզէ ա՛լ իր բարեկամական
դիրքը փոխել Թուրքիոյ նկատ-
մամբ, եւ քիչ չատ սպառնական
ձեւ մը առնել, նկատի առնելով
այն տիրապետող ազդեցութիւնը,
զոր Գերմանիոյ յաջողեցաւ շահիլ
թուրք կառավարութեան խոր-
հուրդներուն վրայ։ Գերմանական
ազդեցութեան հետեւանքն էր
Ռուսիոյ անյաշողութիւնը իշխան
Եօրկիոսի ընտրելութեան գոր-
ծին մէջ։ Թէ Ռուսիա իր նոր
քաղաքականութիւնը Դրան հան-
դէպ առաջ բերու իբր միջոց մը
ընտրած ըլլայ Հայկական խնդիրը,
կարելի է ինչպէս ըսինք, հաւա-
նական իսկ է։

Սակայն զգուշանալու ենք ա-

սոր կատարեալ հաւատք ընծայե-
լէ այժմէն. սպասենք որ աւելի ու-
րոշ տեղեկութիւններ եւ փաստեր
երեւան հանեն տարաձայնուած
լուրերուն ճշմարտութիւնը, որպէս
զի յուսախաբութիւններէ արդէն
այնքան դառնացած մեր սիրտեր
չենթարկուին նոր յուսախաբու-
թեան մ'ալ։

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԸ

Եգիպտոսի Էլ-Սիւսի Էլ-Սիւ-
նիւր հայրենասիրական ընկերու-
թիւնը պատրաստուած էր Աղեք-
սանլըիսի մէջ տալու ներկայա-
ցում մը, որ սակայն տեղի չի
կրցաւ ունենալ, խաղին անունն
էր Էթնէմ փաշային քաջութիւնը
եւ Յոյնիկ վաստոյթիւնը։ Ոստիկա-
նութիւնը արգելեց այս ներկայա-
ցումը, որովհետեւ զայրացած յոյն
ժողովրդին մէկ մասը որոշած էր
անոր դէմ ցոյց մ'ընել եւ մինչեւ
իսկ բռնութեամբ արգելել զայն։

Փառաւ, որմէ կը քաջենք այս
տեղեկութիւնները, հետեւեալ կեր-
պով կը պատմէ խաղին գլխաւոր
տեսարանը՝ Բաթլէ լրագրէն առ-
նելով։

«Պատերազմի է՛ն տաք միջոցին
Սուլթանը նստած է իր գահին
վրայ՝ ոտքերուն տակ գետնամած՝
վեց մեծ տէրութիւնները անոր
մուճակները կը համբուրին եւ գը-
թութիւն կը հայցեն որպէս զի
թշնամութիւնները դադարեցնէ այլ
եւս. բայց կայսերական մուճակ-
ները անդրդուելի կը մնան։ Յան-
կարծ բեմ կուգայ Օլկա թագու-
հին, ինքն ալ կը ծնրագրէ եւ
զանգատելով Եօրկիոս թագաւո-
րէն, շնորհ կը հայցէ Յունաստանի
համար։ Այն ատեն Սուլթանը
շնորհալի թագուհիին կը պարգեւէ
ինչ որ մերժած էր տէրութիւն-
ներուն, — հաշտութեան կնքումը։»

Խաղը կը պարունակէ եղեր նա-
եւ քրիստոնէութեան դէմ գրգռիչ
եւ նախադասական խօսքեր. ահա
նմոյշ մը։

«Ճշմարիտ իսլամները պէտք է
աղօթեն Մարգարէին որ Երկինք
պատուհաս մը տայ աշխարհի, բը-
նալին ընելով բոլոր քրիստոնեա-
ները եւ իսլամութիւնը միայն յաղ-
թական պահելով։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տէրութիւնները աշխարհի ամէ-
նէնհեռաւոր անկիւններուն մէջ կը
մրցին իրարու դէմ։ Անգլիա Հա-
պէշիստանի Նեկուս Մէնէլիքի
հետ առեւտրական դաշնագիր մը
կնքեց, որ, աւելորդ է ըսել, շատ
օգտակար ըլլալ կը խոստանայ
անգլիական վաճառականութեան։
Պէտք չէր որ Ռուսիա իր բըր-
տանական ախոյեանէն հոտ մնար։
Լէոնդէնի ռուս կոմսին, որ ար-
դին բաւական ժամանակէ ի վեր

Մենք ինքի ծառայութեան մէջ կը գտնուի, այժմ կընկերանայ Օռնէանի Հանրի իշխանը իր պաշտօնեայ հապէշական պետութեան: Մենք ինքի այդ երկու պաշտօնեաներու պարտականութիւնը պիտի ըլլայ կապակերպել անոր պետութեան վարչութիւնը, ոչ պաշտօնական պարտականութիւն մըն ալ ունենալով անշուշտ ֆուսսուսուսական շահերը միշտ աչքի տալու ունենալով գործ տեսնելու Այս վերջին պատճառով է անշուշտ որ Նովոքիւսիս կը յայտարարէ թէ Բէթերսպուրկի պաշտօնական շրջանակները անկեղծ ուրախութիւն մը պիտի զգան, եթէ իշխան Հանրի և կոմս Լէոնիդի յաջորդին գլուխ հանել իրենց ստանձնած պաշտօնը:

— Ժողովք Ռէյնաք դատ բաժան Ռոշֆօռի դէմ, որ իր թերթին մէջ յայտարարած էր թէ նա մասնակցած էր Տրայֆուսի ի նպատակ շինուած կեղծ թուղթի մը պատրաստութեան: Ռոշֆօռ չկրցաւ հաստատել իր ըրած ամբաստանութիւնը, որուն համար ինչպէս և այն նախատալից խօսքերուն համար զոր թափած էր Ռէյնաքի գլխին Էնքրաւսիսի մէջ, դատապարտուեցաւ հինգ տարի բանտարկութեան և 1000 ֆր. տուգանքի: Ռոշֆօռ արդէն մոտաբանորդ ուրկէ մինչև այսօր պէտք է որ արձակուած ըլլայ:

— Աւստրիոյ գերման և չեխ ազգութեանց միջև մղուած պայքարը հետզհետէ աւելի սաստկանալով վարակած է նաեւ համալսարանական ուսանողներին:

Գերման և չեխ ուսանողներ ընդհարումներ ունեցան քանի մը համալսարաններու մէջ: Ասոնց առաջին վեցամսեայ շրջանը լրանալու մօտ ըլլալով, կրթական նախարարութիւնը խուսափելու համար ջանք տեսնելու իր ամենէն զործնական միջոց՝ տնօրինեց որ դասախօսութիւնները անմիջապէս դադարին և հակառակութեանց ու ցոյցերու վայր դարձած համալսարանները փակուին մինչև երկրորդ վեցամսեան սկսիլը, որ սովորական ժամանակին տեղի պիտի ունենայ:

— Նոյն ազգային պայքարը նաեւ Սքանտինավիան երկիրներուն մէջ: Շուէտ և Նորվեգիա քաղաքական միութիւն մը կը կազմեն միեւնոյն թագաւորին վեհապետութեան ներքին: Այս միութեան հաստատուելէն ի վեր Նորվեգիա միշտ գանգատած է թէ սահմանադրութիւնը զինքն զրկած է կարգ մը իրաւունքներէ, զորս պէտք է ունենար իր միութեան մէկ անդամը և անիրաւաբար Շուէտի տուած է բացարձակապէս զերազատ դիրք մը: Նորվեգիացիներու բողոքները որոնք հետզհետէ շատցան, ստիպեցին Օսկար թագաւորը եօթը Շուէտցի և եօթը Նորվեգիացի

նշանաւոր իրաւագէտներէ յանձնաժողով մը կազմել, որուն պաշտօնն էր քննել Նորվեգիացիներու պահանջները արդի Սահմանադրութիւնը փոփոխութեան ենթարկելու մասին և որոշել երկու երկիրներու միջև համաձայնութիւն մը գոյացնելու համար հարկաւոր միջոցները: Յանձնաժողովը երկու տարի պաշտօնավարելէ ետքը չկրցաւ իր մէջ համաձայնութեան մը յանգիլ և լուծուեցաւ: այս արդիւնքը արդէն կը ցուցնէ թէ Շուէտի և Նորվեգիոյ միջև որքան մեծ է հակառակութեան և ատելութեան ոգին, որ անշուշտ աւելի պիտի բորբոքի հիմայ երբ հաշտարարի դեր կատարելու կոչուած յանձնաժողովն ալ ցրուած է: Հաւանականաբար ասկէ ետքը շատ բան պիտի լսենք Սքանտինավիան թերակղզիին մասին, որ ցարդ իր վրայ խօսելու քիչ անգամ առիթ տուած է:

Կերեսայ թէ 19-րդ դարուն լինանքն քիչ մը առաջ Շուէտ և Նորվեգիան ինքիւր պիտի ծագի հըրատապ հանգամանքով՝ որպէս զի անգամ մ'ալ հաստատուի թէ վերջացող դարը ազգութեան պայքարի դարն էր:

«ՇԱՐՇՈՒՄ»

Լոյս տեսաւ առաջին թիւն այս կիսաշաբաթականին որ պիտի հրատարակուի չորեքշաբթի և շաբաթ օրերը: Ինչպէս արդէն ծանուցուած էր, տարեկան բաժնեկիին է 10 ֆր. Պուկարիոյ և 12 ֆր. արատասմանի համար, կանխիկ վճարելի:

Անոնք որոնց Շարշումի երեք թիւերը իբր նմոյշ պիտի զրկուին, պարտին կամ բաժնորդագրուիլ կամ ետ զրկիլ իրենց ստացած թիւերը: Խմբագրութեան հասցէն է.

Редакция на в. „Шаржумъ“ — Варна
Redaction du journal „Charjoum“ — Varna
(Bulgarie)

ԻՄՔԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Իրաւունքի պատուարժան գործակատարներէն և բաժանորդներէն կը խնդրուի առ այժմ գրաւ և ապահովագրեալ նամակները զրկել թերթի պատասխանատուին ստ հասցենով

Г. М. СКОНОВЪ 32 в. «Иравункъ»
Варна.
Կամ
M. Mihran Seonian
pour la Rédaction du journal
„Irawounk“. — Varna.

Կը խնդրուի այն անձէն որ Սգերտցի Դուրիթ Պետրոսեանի ուր գտնուիլը հասկնալու համար ազգ մը հրատարակել տուած էր Իրաւունքի մէջ, գալ մեր խմբագրատունը:

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

— Ա. Դ. Ռոշաձուք՝ Մեր թերթին փոքր ծառայը չնեղիր մեզ ոտանաւորներ հրատարակել. բացառաբար միայն կրնանք հիւրընկալել այնպիսի գրուածներ որոնք իւր բանաստեղծութիւնն անսովոր արժէք մ'ունին կամ շնորհալի ձեւի մը տակ կը ներկայացնեն աւօրեայ շահեկան նիւթ մը:

— Կարեկից՝ Շնորհակալութեամբ մերժուած է ձեր առաջարկը:

— Ուղղութիւն չի նշանակել կուսակցական ուղղութիւն. հետեւաբար ուղղութիւն ունենալու համար հարկ չիկայ անպայման Դաշնակցական, Նազարպէկեան կամ վերակալմալ Հնչակեան ըլլալու: Լաւ գիտէք որ հայ ժողովրդի մէկ մեծ մասը այդ կուսակցութիւններէն ոչ մէկուն կը վերաբերի. այս ալ ուղղութիւն մ'է ինքնին որ կայ ժողովրդին մէջ և որուն արդիւնքն ու արձագանքն է իրաւունք: Տարբեր ուղղութեամբ թերթերու գոյութիւնը շատ բնական է, քանի որ նոյն տարբեր ուղղութիւններ գոյութիւն ունին հայ ժողովուրդին մէջ. նաեւ օգտակար է, եթէ միայն խմբագիրները լուրջ վիճաբանութեամբ, պատշաճ լեզուով կարենան իւրաքանչիւրը իր ուղղութիւնը, իր ծրագիրը պաշտպանել առանց հայհոյելու, առանց զրպարտելու և իրողութիւնները խեղաթիւրելու՝ անձնական կամ կուսակցական կիրքերով բորբոքուած: Իրաւունքի մասին կրնաք վստահ ըլլալ թէ զերծ պիտի մնայ միշտ ասանկ հանրաժնութեան թերթէն մը:

— Վշտաւար ի Բ. Խնայեցէք խմբագրութեան ժամանակին և մի զրէք ուրիշ անգամ՝ երկար առդեր՝ ձեր անտեղի հարցումներուն պատասխանը պահանջելով: Պաղտնիքներու թափանցող չինք: Չինք կրնար ալ հետամուտ ըլլալ անոնց թափանցելու, միայն ձեզի հաճոյանալու համար: Այստեղ յայտարարութեանց հաւատարմութիւնը յազոցներու կարգաւ ու դատելն է:

ԵԱ ՊԻՋԻՄ ԳՈՒՐՊԱՆԼԱՐԸՄԸԶ

Ինկիլթերա մէպուսան մէճիսինին քիւշտը միւնստէպէթիլէ, գրաւիչա վիզթորիա հազրէթլէրի տտէթի գատիմէսի իւզրէ պիր նութգ իրատ իթմիշ վէ պու նութգտա կիւնիւլք մէսէլէրին հէման քեաֆֆէսինտէն պահս իլէ պիրէր եօլտա պէյսնը միւլհաւաղա էլլէմիշ օլտըղը մալիւմ տիւր:

Պու միւլհաւաղալար արասընտա եալընը պիր նօթթա նազարը տըզգաթըմըղը ճէլպ էլլէմիշ տիրքի, օտա գրաւիչա հազրէթլէրի:

նին ազընտա չըգան շու սէօղլէր տիր:

«Տիկեր տէվլէթլէր թէտարի. քեաթը հարպիլէյէ բէք զիյատէ գուվլէթ վէ մէթանէթ վէրտիլէրինտէն, միլքիմիզին մատտի վէ մանէվի հէր տիւլիւ մէնաֆիլինի վըգայէ իթմէք վազիֆէսիլլէ միւլքէլլէ պուլսնմամըլ՝ էվլէլէրի սէնէլէրտէն զիյատէ մէսարիֆաթը հարպիլէ թախսիսինէ պիզի մէնպուր իթմէքտէ տիր:»

Գրաւիչա հազրէթլէրին ֆիքրինի աճապա պիզ մի եանըլը անլայօրըլ:

Էկէր տէվլէթլէրին թէտարի. քեաթը հարպիլէյէ գուվլէթ վէ մէթանէթ վէրտիլէրի սահիհ իսէ, Սալպըրիլէրին, Հանօթօլալըն, Սուրաֆիլէրին, Պիւլօվլարըն ազընտան հէման հէր կիւն հէր սաաթ տըշարըյա ֆըրլանան ասայիշքէրվէրանէ վէ սուլհուլանէ սէօղլէրէ նէ՞ մանէա վէրմէլի. էկէր տէվլէթլէրին արզուի վիճտանիլէրի ասայիշի ալէմի ճիտտէն մուհաֆաղա իթմէք ճիհէթինէ մալի իսէ, պու թէտարի. քեաթ նէ՞ իչիւն տիր:

Պունընլա պէրապէր, պու կիպի իֆատաթըն նէ տէրէճէ էհէմիլլէթի օլապիլէճէյինի արթըգ անլամայան գալմամըլ տըր ֆէնտի մէնֆաթը մատտիլլէ վէ եա մանէվիլլէսինէ վէրրէ գատար տօգուլ տըլլարընը կէօրէն պիր տէվլէթլէրի սաաթ վէ առաջ կիպի վահի սէօղլէրէ ալա գուլազ ասմայըլ պիւթիւն ալէմի ալթիւսթ էթմէյէ գալըշաճալընը վէ կէօրտիւլիւ ճիւզի գարարա մուգապիլ պիւլի.ք պիւլի.ք թարպիլէլէր ալմատըգճա կէրի տուրմայաճալընը հէր քէս էօյրէնմիշ տիր:

Հէլէ շու սօն զէմանլարտա Չին մէմալիքի էթրաֆընտա իճրա իտիլէն տիւլիւ տիւլիւ էնթրի. գալար սէօղլիմիլլէր տօգուլլըլընը իսպաթա քեաֆի տիր:

Ալմանիալը պիր գաշ րահիպին չինիլլէր թարաֆընտան գաթիլ իտիլիշ օլմասը Ալմանիա գրալընըն գալպինէ օ՝ տէրէճէտէ թէէսիր իթմիշ իտիլլէ, Չինիսթանըն էն մուհիմ լիմանլարընտան պիրինի տէրհալ գապթ իթմէյէ մուվաֆֆազ օլտու: Ազըպինտէ տէվլէթլէր արասընտա պիր վէլլէլէ տիր գօրտու: Պու կիւլէլ բազալատան պիրէր պիւլիլէք բարչա էլտէ իթմէք արզուսըյա, Բուսիա վէ ինկիլթերա տէվլէթլէրի տէրհալ սահնէի թէմաշայա չըգտըլար: Բուսիա Բօրթ — Ալթուր կիպի տիրէր մուհիմ պիր լիմանը գապթ իթմիլ. ինկիլթէրա իսէ Չինիսթան իլէ ենի պիր իսթիգրազ ազտ իթմէք պէհա. նէսիլլէ, ենի ենի իթմիլազաթ էլտէ իթմէյէ չապալատը: Պիչա.րէ չինիլլէր պու իւշ տէվլէթին էլլիտէ մայմուլ կիպի օյնամայա մէճպուր օլտըլար վէ իշ տէ հալէա իրիթամ պուլմատը:

Շիմտի պիղ պիղէ տիւշինէլիմ
Պիր իրի բահիպ իշին օրթալըղը
պու գատար վէլվէլէյէ վէրէն վէ
թարգիյէ օլարագ Չինիսթանըն
մուհիմմ պիր զըսմընը հէտի զապ-
թընա կէշիրէն հաշմէթլու վիւ-
հէլմ հազրէթլէրի պիղիմ 300,000
քիշիտէն զիյատէ օլան տին վէ
վաթան գուրպանլարըմըղա գար-
շը նիշին ըրգգաթա կէլմէտի
տէ պիր սէօղ, պիր թէք սէօղ
սէօղլէմէտի: Անատօլու քէօղլէ-
լինտէ գանլար սէլ կիպի ընվան
օլտըղը զէման, Ալմանիա վէ թու-
սիա իմքէրաթօրլարը հալընըղ
պիր սէօղ իլէ պու վահշիլիքլէ-
րին էօնիւնիւ ալապիլիլիլէր իքէն,
նիշին սանէմ կիպի սիւքիւթ ի-
տիպ տուրտըլար: Ատալէթ, հագ-
գանիյէթ, մէրհամէթ պէօղլէ՝ մի
իծապ իտէր իտի:

Պիր իրի ալմանիալը բահիպին
վահշիլիլիլէ գուրպան կիլմէտի
պիւթիւն իվրօբայը թա թէմէլին-
տէն սարսմայա քիֆայէթ իտիյօր:

ԵԱ ՊԻՋԻՄ ԳՈՒՐԳԱՆԱՍՐԸՄԸ՝Ձ

ՏԱԽԻԼԻՅԷ

Ջըրաաթ վէ թիծարէթ նէղա-
րէթի թարաֆընտան իշպու շու-
պաթ ալընտա պիր Միւլէ քի-
շատ իտիլէրէք, հէրի մահսուլա-
թըն քեաֆէսիտէն պիրէր նու-
մունէ պուլունտըրըլաճաղը վէ պու
թէշէպպիւստէն մագսատ՝ Պուլ-
կարիա տախիլինտէրի հէրի մահ-
սուլաթը էհալիլիլէ պիլտիլմէքտէն
իպարէթ օլտըղը խապէր ալընմըշ
տըր:

Բուսնուգատաքի սօգաղլարըն ին-
թիզամ թահթընա ալընմասը վէ
ավարըղ հօլլարընըն հարըլմասը
իշին Բուսնուգ պէլէտիլէսի թա-
րաֆընտան 5,000,000 ֆրանգըղ
պիր իսթիզրաղ ագտընա գարար
վէրիլմիշ տիր:

Թիծարէթ նէղարէթի թարա-
ֆընտան՝ մէյլէտար աղաճլար հէ-
թիշտիրմէք վէ շարապ իմալ իթ-
մէք իլմինի էօյրէթմէք իշին
ֆիւսթէնտիլտէ պիր գաշ տէրս
մահալլէրի քիւշաա իտիլէճէյի ի-
շիտիլմիշ տիր:

Ասիւրէն Ֆիլիպէտէ հէնի պիր
թէպէշիր ֆապրիգասը աշըլմըշ
տըր: Պու ֆապրիգատա մէք-
թէպէրէ մախսուս զայէթ էյի
նէվտէն թէպէշիր հարըլմագտա
օլտըղընտան, պու թէպէշիրի մու-
այէնէ իթմէք մէմուրիյէթիլլէ պիր
գօմիսիօն թէշէրի իտիլմիշ վէ պու
գօմիսիօն հարըլան նուսունէլէրի
էյի պուլմուշ տըր:

Թիծարէթ նէղարէթիինն էլին-
տէ պսլընան թուլ աղաճլա-
րընը սաթըլա չըգարմագ իշին
րուխսաթ վէրիլմիշ օլտըլըն:

տան, պէհէր թուլ ֆիտանը
պէշէր սթօնթիգայա սաթըլաճագ
տըր: Շիմտիլիք էլտէ 276,502
թուլ ֆիտանը պուլունմագտա
տըր:

Էօնիւմիւղտէրի իլք պահարտա
թուլնա իւղէրինտէ Բուսնուգ վա-
բօրլարընըն իլլէմէյէ պաշլայաճա-
ղը վէ պուլըն իշին Բուսնուգ
հիւքիւմէթի թարաֆընտան թու-
նանըն Պուլկարիայա ալիտ օլան
լիմանլարընտա աճէնթէլէր թէէ-
սիս իտիլէճէյի իսթիսպար զը-
լընմըշ տըր:

Միւլէվէթֆա Եւօկի կէօրկի-
էվին վասիլէթ իթտիլի ագճէ իլէ
Սօֆիատա հարըլաճագ օլան Պուլ-
կար տար իւլ ֆիւնուլընտա շիմտի
թէտրիս օլունան իլլուլ վէ ֆիւ-
նունտան մատա, միւհէնտիլիք
վէ սէնայի իլիմէլընին տախի
թէտրիս իտիլէճէյի Պուլկար կա-
ղէթալարըն հաղըլօրլար:

ՄԻԻԹԵՆԷՎ ՎԻԷ

ԿԻՐԻՑ ՄԷՍԷԼԷՍԻ

Կիրիտ առաւընա տիկէր պիր
նամզէտ կէօսթէրմէսի հագգընտա
Բուսնուգ Պուլկարնա իթտիլի
թէքիլիլէրին ճէվաղը Բամազան-
տան սօնրա վէրիլէպիլէճէյի Սուլ-
թան թարաֆընտան թէպիլիլ
օլունմուշ ըմըշ:

Ֆրանքֆուրթի Զայրուկ կա-
ղէթաւընըն հաղտըղընա կէօրէ,
Սթամպուլ սէֆիլիլէրի Շարգա ա-
լիտ օլան մէսէլէլէրէ տահա զիյա-
տէ վաղըթ վէ աշնա օլտըղլարըն-
տան, պու նամզէտիլք մէսէլէսի-
նին տախի թէսպիլէսի սէֆիլիլէրէ
թէքը օլունմասընը իտալիա տէվ-
լէթի տիկէր աշվլէթլէրէ թէքիլիլ
էլլէմիշ տիր:

Եունանիսթան գրալը Եօրկիօս
հաղրէթլէրի Բուսնա իմքէրաթօ-
րընա խուսուսի պիր մէքթուպ
հաղըղ, օլլու բրէն Եօրկիօսըն
կիրիտէվալի թային օլունմասը
խուսուսընտա սօն տէրէճէտէ ըս-
րար կէօսթէրմէսի ընճա իթ-
տիքտէն սօնրա, թաղմինաթը
հարպիյէ նամըլլա թիւրքիայա
վէրիլմէսի մուգարրէր օլան 4 միլ-
հօն լիւրալըղ իսթիզրաղըն 5 միլ-
հօնա իպլաղ օլունմասը իշին տա-
խի պէյանը արգու էլլէմիշ տիր:

Պագը գալաճագ պիր միլիօն լի-
րա՝ Եունանիսթանըն էն միւս-
թաճէլ լէվաղիլմաթընա թախիս
իտիլէճէք իմիշ:

ԹԻՒՐԻՒՄ ՎԷ ՊՈՒԼԿԱՐԻՍ

Եըլտըղ Սարայընըն օրկանը
սալըլան Մալիւնաք կաղէթասը
Պուլկար կաղէթալարընըն իւս-
կիւպ, Մանասթըր, Սէլանիք վի-
լայէթլէրինտէ վուգուս կէլէն ույ-
կունուլըղըլարա տախի վէրտիք:

լէրի մալիւմաթա գարշը թէքիլիպ
հօլլու պիր պէնտը մախսուս հաղ-
մըշ վէ պու պէնտի Սթանպուլըն
պիւթիւն օսմանը կաղէթալարը
նէշը իթմիլլէր տիր:

Պու պէնտտէ Պուլկար կաղէ-
թալարընա գարշը բէք շէտիտ
պիր լիսան գուլանըլմըշ օլուպ,
մէքքիւր իւլ վիլայէթտէ վուգուս
կէլէն ույկունուլըղըլարըն Պուլ-
կար էշքըյա շէթէլէրի թարա-
ֆընտան իլէրի կէլմիշ օլտուղը
իւսվէթէն պէյան իտիլմիշ տիր:

Իւսքիւպ մէթօրօլիտիլլէ տի-
կէր պիր գաշ բուհանիլէրին վէ
մուսլիմէրին պաղը սուի հարէ-
քէթլէրտէ պուլունտըղլարընա տա-
խի Պապը Ալի ճանիպիտէն շի-
քեայէթլէր պէյան իտիլմիշ օլտը-
ղընտան, պու խուսուսը թահգիդ
վէ մէրճիլիլէ իսպար իթմէք իւլ-
րէ, Սթամպուլ Պուլկար էկզարգ-
հանէսի մէմուրլարընտան պիրի
Սկիւպէ կէօնտէրիլմիշ տիր:

Իւսկիւպ գարշըղըղլարընա էն
զիյատէ զիլմէտիլլէ սալըլան պիր
թիւրք գայմագամընըն աղ օլուն-
մասընը Պուլկար հիւքիւմէթի թա-
լէպ իթմիշ իսէ տէ, Սուլթան
պունը գաթիլլէն ընտա իլէ, իւս-
կիւպտէ պու խուսուսա տախի
թահգիդաթա մուպաշէլէթ օլըն-
մասընը վէ պու թահգիդաթա
քիլմէր գապաշաթլը իսէ, օնլարըն
միւճաղաթա չարտըրըլմասըն էմը
էլլէմիշ տիր:

ՁԵԿՈՅՑ

Տաւրոսի խմբագրութիւնը կը խընգ-
րէ միւլմէ ծանուցանիլ թէ թերթը
յետ ալտրիկ երեքշաբթի օրը պիտի
հրատարակուի փոխանակ չարաթի:

Ով որ գիտէ ֆարքերթցի Յովհան-
նէս Գիւնսեան անուն երիտասարդին
ուր գտնուիլը, թող հաճի գրել հետեւ-
եալ հասցէին:

Յովհաննէս Տէր—Յովհաննէսեան
157 Summer st.
(U. S. A.) Worcester Mass

ՁԱԽԻՐԻ ԲԻՍՏԱՍԸ

Վաւան 2 փետրուար
Պոռպուր

Վալիօն, լիպրա 47-54, հէքթօլ-
8-50.9.20 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ-
8.50-44 ֆրանք
Արապա
Լիպրա 38-44, հէքթօլ 4-50.5
ֆրանք

Մըպըր
Վալիօն, լիպրա 57-58 հէքթօլ-
5.90-6 ֆրանք
Արապա, լիպրա 57-61 հէքթօլ-
620.640 ֆրանք

Յասուրիւս
400 օգգատը 18-22 ֆրանք՝ մալա
կէօրէ

Արապա մուսմէլէսի՝ Նարօլէն
24 ֆո. հիտալը իլէ տիր:

Կիւնտէ 2-3 վալիօն վէ 2-3
արապա պուլտալ, 3-5 արապա
արապա, 1-2 վալիօն վէ 3-4
արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՄՈՒՀԻՄ ԻԽԹԱՐ

Պունտան պէօղլէ թարաֆըլա
կէօնտէրիլէճէք ապօնէ պէտէլլէրի-
նի վէ թէահհիտիլ մէքթուպ-
լարը մուվագգաթ պիր միւստէթ
իշին աթիտէքի առէսլէ կէօն-
տէրմէլէրինի կաղէթամըղ ապօնէ-
լէրինտէն վէ մապահաթ կիւզարա-
րընտան խասսէթէն ընճա իտէ-
րիլ:

Г. М. СКОНОВЪ за в. «Иравункъ»
Варна.

Եախօս

M. Mihan Seonian
pour la Rédaction du journal
„Iravounk“. — Varna.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին եւնոր ա-
զատ երգեր, զորս ալթմ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանգի նոսկապարզով
(բօստի բուլ) իւրկելով խմբագրու-
թեանս, կամ դիմելով հետեւեալ
հասցէներուն:

Տեարք
Արիս Գուրպէթ. Բուսնուգ
Կարապետ Ուզունեան Սիլիստրէ
Ալէքս. Տէմիրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր Արալանեան Տօպրիշ
Յովհաննէս Պիպէնեան Պուզըշ
Արթ. Տէր Ղեւոնդ քնյ. Կալաք
Թէօֆիլ թէրգեան Գէօտէնճէ
Ա. Կիւլէղ Նիքոսիս
Գարգին Պահլաւունի Գահիթէ

Աղգ. վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100
գնդշ կը լինի:

ՏԱՐԵՑՈՅՑ

Հրատարակուեցաւ հայ-Ռուսնե-
րէն տարեցոյցն ի Կալաք, ձեռամբ Տ.
Ղեւոնդ քահանայ Փափաղեանի: Կը
պարունակէ Ա. մամանակագրութիւն
երեւելի անցից աշխարհի. Բ. համա-
նօտ գիտելիք ի վերայ տոմարին հայոց
Գ. ոտանաւոր մը՝ Չգայուն հոգին.
Դ. բուն օրացոյցը. Ե. յաւելուած մը
որ կը բաղկանայ «ոգին արաբկիրի»
վերնագրով եղերեղութեան մը, եր-
կու ոտանաւորներէ ու բարոյալից ա-
սացուածներէ:

Գին 1 ֆրանգ, կը ծախուի Վաւան
գրապահաւ Ա. Չարքանէլեանի քով:
Տ. Ղեւոնդ քահանայ հրատարակած
է նաեւ իր նախորդ տարուան օրա-
ցոյցին յաւելուածը որ կը ծախուի 50
սանդիլի:

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Պոռպուրեքիլ լեզուի

Պուլկարեքիլ սորվիլ փափագող-
ները՝ առաջնորդ ունենալով իրենց
սոյն քերականութիւն՝ կրնան վեց
ամսուան մէջ կարգալ գրել և խօ-
սիլ: Կը ծախուի ֆ. Պօլիս, թըղ-
թապահաւ թագուր Գ. Հինդլեանի
մօտ:

Գինն է՝ ընտիր կազմ, հրահանգ-
ներու բանալին մէկտեղ, 6 լէվ.
թղթակազմ, առանց բանալիի 4 լէվ.
առանձին բանալին 60 սանթիմ:

Միւսքանակ գնողներուն մաս-
նաւոր գնդշ կըլլայ: